# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

28.05.2022 10:51

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը ուղերձ է հղել Առաջին Հանրապետության տոնի կապակցությամբ։

Նա մանավորապես նշել է.

« Հայը կարող է հաղթել բոլոր իրավիճակներում, եթե այդպես է որոշել։ 1918 թվականի մայիսի 28-ը դարձավ դրա վառ ապացույցը։ Գեոպոլիտիկ գերլարված պայմաններում՝ Մեծ եղեռնից հետո և Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերի համայնապատկերին հռչակվեց Հայաստանի առաջին հանրապետությունը։ Առաջին Հանրապետությունը դարձավ այսօրվա Հայաստանի հիմնասյունը։ 1918-1920 թվականներին ձևավորվեցին Հայաստանի համար առանցքային նշանակություն ունեցող ինստիտուտները՝ այդ թվում փաստաբանության ինստիտուտը։

Սիրելի՛ հայրենակիցներ,

շնորհավորում են բոլորիս՝ Հանրապետության տոնի կապակցությամբ։

Հավերժ փառք նրանց, ովքեր կերտեցին մայիսի 28-ը,

Հավերժ փառք ու խոնարհում այն հայորդիներին, ովքեր իրենց կյանքը զոհեցին հանուն ազատ ու անկախ Հայաստանի։

Թող մեր Եռագույնը շարունակի ծածանվել խաղաղ երկնքի տակ»։

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })